



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

### ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ և 44-րդ հոդվածների պահանջները,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի 3.1-րդ, 3.2-րդ, 3.3-րդ, 3.4-րդ և 3.5-րդ կետերով,

հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթի կազմակերպման և մրցույթի արդյունքների գնահատման համար,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

#### 1. Ստեղծել մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով՝

##### Հանձնաժողովի նախագահ՝

Պալատի նախագահի տեղակալ (ի պաշտոնե Հանձնաժողովի նախագահ)

##### Հանձնաժողովի անդամներ՝

Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար (ի պաշտոնե Հանձնաժողովի անդամ)

Ռոման Ահարոնյան փաստաբան, արտոնագիր թիվ 1289 (համաձայնությամբ)

Էմիլ Ամիրխանյան փաստաբան, արտոնագիր թիվ 993 (համաձայնությամբ)

Լյուդվիկ Դավթյան փաստաբան, արտոնագիր թիվ 1416 (համաձայնությամբ)

10 նոյեմբեր 2021թ.  
թիվ 274-Ա

**2. Սահմանել, որ Հանձնաժողովը գործում է որոշումը հրապարակելու պահից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը:**

**3. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Պալատի կարգապահական գործերը համակարգող Նոննա Համբարձումյանին:**

**4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին հրազեկել Հանձնաժողովի անդամներին:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Սիմոն Բաբայան

10 նոյեմբեր 2021թ.  
թիվ 274-Ա  
ք. Երևան